Գնահատման էլեկտրոնային համակարգի կիրառման մասին Գնահատման ծառայության հաղորդումը

01-ը դեկտեմբերի 2012 թվական

Ուսումնասիրության համար հիմք է ծառայել դպրոցների և քոլեջի էլ.հասցեների SkyDrive-ներում տեղադրված տեղեկատվությունը: Բոլոր դպրոցներում առկա են գնահատման էլեկտրոնային մատյաններ:

Կրտսեր դպրոցներում գործում է գնահատման միասնական համակարգ.

- **գնահատում 1՝** 5-6-րդ դասարանների համար առարկայական գնահատման մատյաններ
- **գնահատում 2՝** 1-6-րդ դասարանների համար, այն ներառում է ուս. ճամփորդությունները, մեդիաոլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումները
- **աճի բնութագիր, դիտման էջ՝** 1-4-րդ դասարանների համար:

Լրացման ոչ մեծ թերությունները կշտկվեն:

Նոր դպրոցում ըստ օրերի լրացված են 5-6-րդ դասարանների առարկայական գնահատման մատյանները, լրացված են 1-6-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաոլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող մատյանները: Այստեղ կան մի քանի բացթողումներ, ինչի մասին տեղեկացվել է ծրագրի ղեկավարը (5-6-րդ դասարաններ): Չկա դիտման և աճի բնութագրի փաթեթը:

Դպրոց պարտեզում ըստ օրերի լրացված են 5-6-րդ դասարանների առարկայական գնահատման մատյանները (թերի է տեխնոլոգիա, մարմնակրթություն առարկաների էջերը), տեղադրված են սակայն լրացված չեն 1-4-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաոլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող մատյանները և դիտման, աճի բնութագրի փաթեթը: Չկա 5-6-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաոլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող գնահատման մատյանները:

Գեղարվեստի կրտսեր դպրոցում ըստ օրերի լրացված են 5-6-րդ դասարանների առարկայական գնահատման մատյանները (թերի են լրացված ռուսերենի մատյանները): Լրացված չեն 1-4-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաոլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող գնահատման մատյանները: Չկան դիտման և աճի բնութագրի փաթեթը և 5-6-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաոլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող գնահատման մատյանները:

Հիմնական դպրոցում ըստ օրերի լրացված են 5-9-րդ դասարանների առարկայական գնահատման մատյանները, թերի են դիցաբանության, տեխնոլոգիայի, երաժշտության, մարմնակրթության էջերը: Լրացված են 1-4-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաօլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող մատյանները և դիտման, փաթեթը: Առկա է աճի բնութագրի փաթեթը: Չկա 5-6-րդ դասարանների համար նախատեսված ուս. ճամփորդությունները, մեդիաօլիմպիադաները և ուսումնական օրացույցով որոշված միջոցառումներ սովորողի մասնակցության ձևերը արձանագրող գնահատման մատյանները:

Միջին դպրոցում ըստ առարկաների տեղադրված են բոլոր դասավանդողների էլեկտրոնային մատյաններ, որոնք թերի են լրացված:

Ավագ դպրոց վարժարանի SkyDrive-ում տեղադրված են դասավանդողների անհատական մատյաններ, որոնք թերի են լրացված:

Գեղարվեստի խորացված ուսուցման ավագ դպրոցի SkyDrive-ում տեղադրված են ընդհանուր առարկայական մատյաններ որոնք թերի են լրացված (հիմնականում մասնագիտական առարկաները):

Արհեստագործական դպրոցի SkyDrive-ում տեղադրված են էլեկտրոնային ընդհանուր առարկայական մտյաններ, որոնք թերի են լրացված:

Քոլեջում գործում է ըստ առարկայի մոդուլային գնահատում: Մոդուլները տեղադրված են քոլեջի սքայ-դրայվում (ոչ բոլոր դասավանդողներն են դեռ լրացրել, մի մասինը մշակման փուլում է):